



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

8 սեպտեմբերի 2020 թվականի թիվ 95-Ն

ք. Երևան

ՄԱՍՆԱՎՈՐ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի, 7-րդ մասի, 52-րդ հոդվածի 7-րդ մասի և «Լիցենզավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել՝

1) մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզիայի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 8
ք. Երևան

ԿԱՐԳ
ՄԱՍՆԱՎՈՐ ՍՈՒԼՏԻՊԼԵՔՍ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է մասնավոր մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպման և անցկացման ընթացակարգը:

2. Մրցույթն անցկացնում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կարգի համաձայն:

3. Հանձնաժողովը իր կառավարմանը հանձնված ազատ հաճախականությունների առկայության դեպքում հայտարարում է մրցույթ:

4. Մրցույթը չկայանալու կամ մրցույթում հաղթող չլինելու դեպքում այն հայտարարելուց 10 օր հետո Հանձնաժողովը հայտարարում է նոր մրցույթ:

5. Մրցույթին կարող են մասնակցել միայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձինք, որոնց հիմնադրման (ստեղծման) ժամանակ կամ դրանից հետո իրավաբանական անձի օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է հավասար կամ ավելի լինի մուլտիպլեքս օպերատորի որոշումների ընդունման համար անհրաժեշտ բաժնեմասերի 50 տոկոսից, եթե այլ բան նախատեսված չէ միջազգային պայմանագրով:

6. Մասնավոր մուլտիպլեքսի սփռման տարածքը չպետք է լինի ավելի փոքր, քան մեկ մարզի կամ Երևան քաղաքի տարածքը:

7. Մրցույթն անցկացվում է հրապարակային կարգով:

2. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

8. Մրցույթը հայտարարվում է Հանձնաժողովի որոշմամբ:

9. Մրցույթի մասին տեղեկատվությունը Հանձնաժողովը հրապարակում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am

պաշտոնական ինտերնետային կայքում և իր՝ www.tvradio.am պաշտոնական ինտերնետային կայքում:

10. Մրցույթի մասին տեղեկատվությունը պետք է ներառի՝

- 1) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը,
- 2) սփռման տարածքը,
- 3) մրցույթին մասնակցելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը,
- 4) հայտերի ընդունման ժամանակահատվածը և վայրը,
- 5) լրացուցիչ տեղեկություններ ստանալու աղբյուրը՝ հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն,
- 6) հայտի ձևը:

3. ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

11. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է մուլտիպլեքս օպերատորի գործունեության լիցենզավորման մրցույթին մասնակցելու հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ համաձայն Ձև N 1-ի և անհրաժեշտ փաստաթղթեր:

12. Հայտին կցվում են՝

1) մուլտիպլեքս ցանցի ստեղծման նախագիծը, ներառյալ՝ ցանցի գործարկման ժամանակացույցը.

2) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների և սարքավորումների մասին.

3) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր.

4) հայտատուի հիմնադիր փաստաթղթերի պատճենները:

13. Հայտը և կից փաստաթղթերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենքներին, այլ իրավական ակտերին և սույն կարգով սահմանված պահանջներին:

14. Հայտատուն, օրենքով սահմանված կարգով, պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:

15. Հայտը և կից փաստաթղթերը Հանձնաժողով են ներկայացվում մրցույթ հայտարարելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում՝ առձեռն կամ փոստով:

16. Հայտին կից փաստաթղթերը ներկայացվում են երկու նույնական փաթեթով՝ յուրաքանչյուրը թելակարված, համարակալված, վերջին թերթի հետնամասում, կարի վրա փակցված պիտակով՝ «Բաղկացած է ... թերթից» գրառմամբ («...» նշվում է թերթերի քանակը), ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում), ընդ որում փաթեթներում ներառված մուլտիպլեքս ցանցի ստեղծման նախագիծը և ցանցի գործարկման ժամանակացույցը պետք է ներկայացվեն առանձին թելակարված:

Փաթեթները ներկայացվում են փակ ծրարով՝ ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում):

4. ՀԱՅՏԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

17. Հանձնաժողովը Հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո եռօրյա ժամկետում իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է մրցույթի մասնակիցների ցանկը:

18. Մրցույթի մասնակիցների հայտերը և կից փաստաթղթերը հրապարակվում են Հանձնաժողովի դռնբաց նիստում՝ ըստ հայտերի գրանցման հերթականության, հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում:

19. Հանձնաժողովը մասնակցին է տրամադրում Հայտը և կից փաստաթղթերը՝ փակ ծրարով: Հայտի բովանդակությունը ներկայացնելու համար մասնակցին տրվում է 30 րոպե:

20. Նիստում անցկացվում է նաև փորձագետների ընտրություն՝ ցանցի ստեղծման նախագծի և ժամանակացույցի տեխնիկական փորձաքննություն իրականացնելու համար:

21. Մուլտիպլեքս ցանցի ստեղծման նախագծի և ժամանակացույցի տեխնիկական փորձաքննությունը պետք է իրականացվի առավելագույնը երկու ամսվա ընթացքում: Եթե երկու ամսվա ընթացքում փորձագիտական խումբը չի տալիս տեխնիկական եզրակացություն, ապա համարվում է, որ այն համապատասխանում է անհրաժեշտ պահանջներին:

5. ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

22. Տեխնիկական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո՝ առավելագույնը մեկ ամսվա ընթացքում, Հանձնաժողովը հրավիրում է նիստ և բաց քվեարկության արդյունքում՝ հիմք ընդունելով փորձագիտական եզրակացությունը, որոշում է ընդունում լիցենզիա տրամադրելու կամ Հայտը մերժելու մասին:

23. Քվեարկությունն իրականացվում է ըստ մասնակիցների հայտերի գրանցման հերթականության՝ հաշվի առնելով հետևյալ չափանիշները՝

1) մուլտիպլեքս ցանցի ստեղծման նախագծով ներկայացված հեռարձակման ցանցի առաջարկվող սփռման տարածքի չափը,

2) մասնակցի կողմից առաջարկվող ծառայությունների որակը,

3) հայտատուի տեխնիկական հնարավորությունները,

4) հայտատուի ֆինանսական հնարավորությունները:

24. Մինչև քվեարկությունը Հանձնաժողովի անդամները հայտերի և կից փաստաթղթերի քննարկում չեն իրականացնում և չեն հրապարակում իրենց դիրքորոշումները դրանց վերաբերյալ, սակայն կարող են հանդես գալ հայտարարությամբ, միջնորդությամբ:

25. Լիցենզիա տրամադրելու կամ Հայտը մերժելու մասին որոշումն ընդունվում է անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

26. Հայտը մերժվում է, եթե ստացվել է տեխնիկական փորձաքննության բացասական եզրակացություն կամ ներկայացված Հայտը չի բավարարում սույն կարգի 23-րդ կետում ներկայացված չափանիշներին:

6. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

27. Հանձնաժողովի որոշումը մրցույթի մասնակիցներին ուղարկվում է որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

28. Մրցույթի մասին ամբողջական տեղեկատվությունը Հանձնաժողովը հրապարակում է իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ որոշումն ընդունելու օրվանից հետո՝ 20-օրյա ժամկետում:

29. Մրցույթի արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով:

7. ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

30. Հանձնաժողովը մրցույթը հայտարարում է չկայացած, եթե՝

1) սահմանված ժամկետում ոչ մի Հայտ չի ներկայացվել, կամ ներկայացված հայտերից ոչ մեկը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) մրցույթի միակ մասնակցի կամ բոլոր մասնակիցների մուլտիպլեքս ցանցի ստեղծման նախագծի և ժամանակացույցի տեխնիկական փորձաքննության արդյունքում տրվել է բացասական եզրակացություն.

3) մրցույթի միակ մասնակցի կամ բոլոր մասնակիցների մուլտիպլեքս ցանցի ստեղծման նախագծով ներկայացված հեռարձակման ցանցի առաջարկվող սփոման տարածքի չափը չի համապատասխանում «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով սահմանված պահանջին:

Մասնավոր մուտիպլեքս օպերատորի
գործունեության լիցենզավորման
մրցույթի անցկացման կարգի

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի նախագահ

_____ին
(անուն, ազգանուն)

Հ Ա Յ Տ

**Մասնավոր մուտիպլեքս օպերատորի գործունեության
լիցենզավորման մրցույթին մասնակցելու**

Հայտատուի անվանումը _____

Գտնվելու/հաշվառման վայրը _____

Հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն _____

Միջման տարածքը _____

Կից փաստաթղթեր՝ _____ թերթ:

Հայտատու _____
(անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

_____ (օրը, ամիսը, տարեթիվը)

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԼԻՑԵՆԶԻԱ _____

(լիցենզիայի սերիան և համարը)

Ք. _____

(լիցենզիան տալու օրը, ամիսը, տարեթիվը)

տրվում է

(իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

գործունեության
տեսակը

(իրավաբանական անձի գտնվելու կամ ֆիզիկական անձի հաշվառման վայրը)

սփռման տարածքը

լիցենզիայի գործողության
ժամկետը

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ _____

(ստորագրություն)

Կ.Տ.

(անուն, ազգանուն)